ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՄԵՆ ՖԵՐՈՅԱՆԸ ՆԵՐԳՐԱՎՎԵԼ Է ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ

31.07.2020 13:03

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ Նելլի Հարությունյանը հանրային ծառայության անցնելու կապակցությամբ 28.07.2020թ. գրավոր դիմում է ներկայացրել խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ:

ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.4 կետի համաձայն փաստաբանների պալատի խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում այդ անդամի փոխարեն ներգրավվում է փաստաբանների պալատի խորհրդի անդամների վերջին ընտրության տվյալներով վարկանիշային հաջորդ առավել «կողմ» ձայներ ստացած փաստաբանը:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 31.07.2020թ. թիվ 145-Ա որոշմամբ արձանագրվել է, որ ***ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի 12.02.2017թ. թիվ 2-Խ արձանագրության 5-րդ կետի համաձայն վարկանիշային հաջորդ առավել «կողմ» ձայներ ստացած և որպես ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ ներգրավվելու համաձայնություն ներկայացրած փաստաբան Արմեն Սամվելի Ֆերոյանը (197 ձայն, 39-րդ տող) 2020 թվականի օգոստոսի 1-ից (գրավոր համաձայնությունը ներկայացնելու հաջորդ օրվանից) համարվում է ներգրավված ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կազմում Նելլի Հարությունյանի փոխարեն՝ վերջինիս լիազորությունների համար սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածով:***

ՀՀ փաստաբանների պալատը շնորհակալություն է հայտնում փաստաբան Նելլի Հարությունյանին՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդում ծավալած արդյունավետ գործունեության համար:

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 31.07.2020թ. թիվ 145-Ա որոշումը.

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })